

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱԿՈՒԹԻՒՆԵՐ

«Русская мысль». Յունիս.—

«Վարութեական բախմաները եւ հայոց առաջաւոր ամսագիրը»:—Այդ վերնագիրն է կրում հայ ընթերցողին վաղուց արդէն յայսնի ուսու զարկանագէտ Խըլից Վենելովսկու յօդուածը: Օգտուելով մի շարք հայելին աղբիւներից և զիմասրապէս Լէօի «Մասնական նազարեանց» աշխատութիւնից՝ Վենելովսկին ամփոփ կերպով պատկերացնում է զրական-հասարակական այն շարժումը, որ կապուած է նազարեանցի անուան հետ, որի արտայայտիք բերանն էր «չիւսիսափալլ» ամսագիրը:

—«Հայ մամուլը, ասում է նա, ներկայացնում է մի անկասկածելի հենուաքրութիւն անաշառ զիտողի համար, թէն չի կարող համեմատուել եւրոպական ազգերի մամուլի հետ: Նրան չէ յաջողուել հաստատուն դրութիւն բռնելու, հասարակութեան վրայ զօրեղ ազգեցութիւն ձեռք բերելու, — թէն նրա կարեսորութիւնը անկասկած զգացրուել է շատ հին ժամանակներից: Դրան ապացոյց կարող է ժառայել այն երեսից, որ լրագիրներ են առաջ եկել բոլոր այն տեղերում, որտեղ հայկական գաղութներ են հաստատուել—Կալկուտայում, Մադրասում, Բոմբէյում, Սենգալիայում, Կայիրում, Ակերասանդրում, Երուսաղէմում, Աթէնքում, Վենետիկում, Կիէնայում, Լոնդոնում, Մարսելում, Նիւ-նորկում և այլն: Այդ թերթերի մեծամասնու-

թեան խմբագիր-հրատարակիչները մինչև այժմ ստիպուած են եղել գոյութեան ծանր կոփ մղել թէ հաստրակութեան մեծամասնութեան անտարբերութիւնից և թէ արտաքին գրուարութիւններից: Բայց այդ կափ մէջ շատ բան է եղել խրատական ու աղնիւ: 109 տարիներից ընթացքում (հայ մամուլի սկիզբը 1794 թ. է) այդ բազմաթիւ հրատարակութիւններից ոչ բոլորն են հետք թողել մամուլի պատմութեան մէջ և որոշ կերպարանք ունեցել: Մի քանիսը եղել են այ երկարաժեկ, նիւթով ու տաղանդով աղօտ և չեն կարողացել մի նոր խօսք ասել: Մի քանիսն էլ ընդհակառակը՝ ընթերցող հասարակութեան մէջ մտցրել են որոշ գաղաքաններ, արձագանք են տուել ժողովրդի ամենահրատապ հարցերին, կոփ են սկսել անշարժութեան դէմ: Դրանց թիւն պատկանում է և Մոսկուայի ամսագիրը՝ «Հիւսիսափալլ», որ հրատարակում էր 1858—64 թւականներին և արժանի է, որ ուսու հասարակութիւնը գոնէ 40—45 տարուց յետոյ ըստ արժանույն գնահատէ նրան...»

Այդ փոքրիկ ներածութիւնից յեղինակը անցնում է բուն խնդրին, նըկարագրում է Ս. նազարեանցի գործունէութիւնը՝ տեղ-տեղ համեմատելով և կապելով ժամանակակից ուսուական շարժման հետ, ցոյց տալով դրանց առնչութիւնը և յօդուածը եղանակագիր է հետևեալ խօսքերով.

— «Մեզ—ոռւսներիս համար «Հիւսափայլի» և նրա շուրջը խթուած շրջանի պատմութիւնը հետաքրիլը է մանաւանդ այն պատճառով, որ հայ մամուլի և հրապարակածիսութեան անսպասելի ծագկումը տեղի է ունեցել ոռւսաց 60-ական թւականների հասարակական կեանքի ազգեցութեան տակ: Ընդհանուր կենդանութիւնընը հոսանքները ալձագանդ զբան հայկական միջավայրում՝ առանց զրկելու նրա գործիչներին ինքնուրույնութիւնից, այլ ընդհակառակը՝ ստիպելով նրանց տելի ուշադրութեամբ զննելու մարքենի կեանքի կարիքները, Մենք կարող ենք ուրախանալ մեր կուլտուրայի միայն այդպիսի ազգեցութեամբ, որ ընդորինակաւում է բոլորին ինքնակամ, սեփական նախաձեռնութեամբ: «Կարող է արդեօք թուսաստանը, բարեացակամ թուսաստանը և մարդաւեր թագաւորը, գրում էր նազարեանցը 1859 թւականին, ցանկանալ փակել մեր առաջ մլտաւոր ազատ զարդացման ճանապարհը: Ոչ, երբեք...»

Այդ կուլտուրական շվման պահանջն աճել է փերջին 40 տարիների ընթացքում՝ շատ յետ թրանելով 60-ական թւականների շրջանի և «Հիւսափայլի» խմբակի գործունէութիւնը: Ամենալաւ հայ հեղինակներն ու ինտելիգենցիայի ներկայացուցիչներն այժմ բացարձակ յայտնում են իրանց համականքը զէսի մեր կեանքի և զըրականութեան առաջարկէմ ու մարդասիրական հոսանքները: Նրանք մեզանից սպասում են նոր խօսք, սպասում են արդար, անաշառ և եղալրական վելաքարումնք... Ցնանք ուրեմն նրանց հանդէս, ձեռք երկարացներ կուտառական համերաշխ գործունէութեան համար՝ յանուն ընդհանուր իգէաների»:

— «ԵՇՏԻՆԻԿ ԵՎՐՈՊԱ»: Յունիս. — «Կովկասի բարձութերի վրայութիւն փերջինադրի տակ պ. թ. թելուկնուկին ամփոփել է իր ճանապարհորդա-

կան ապաւորութիւններն ու դիտողութիւնները՝ աշխատելով զբանով գաղափար տալ Կովկասի լեռնային բրնութեան մասին և մատնանիշ անել այդ բնութեան գրաւիչ կողմերը: Կովկասան լեռներն են եղել նրա ճանապարհորդութեան վայրերը, և նա բաւական ճշգրիտ ձեռվ պատկերացը նույն է այդ լեռնավայրերի գրաւիչ բընութիւնը՝ սահմանափակուելով միայն նալշիկի շրջանով:

«Հայունութեան» Օօօօօթեանի», № 5. — Լրագրական տեղեկութիւններից արգէն յայտնի է այն տըրագիկական մահը, որին հնթարկուեց «Հայունութեան» Օօօօօթեանից լրագրիպը—Մ. Փիլիպպովը: Դրականութեան ու գիտութեան անձնուէր զինուոր էր նա բառիս բուն նշանակութեամբ, և նրա վաղաժամ մահն էլ եկաւ լիովի ապացուցնելու այդ ճշմարտութիւնը: Նա մեռաւ քիմիկական մի գիւտ անելիս: Բայց Փիլիպպովը զրականութեան մէջ յայտնի էր աւելի լիբրի վիլիսոփայ, անտեսածէտ ու զրականագէտ, քան թէ իրեն քիմիկոս: Առհանարակ նա օժտուած էր բարձակողմանի կրթութեամբ ու գիտական հարուստ պաշտով և գիտէր տեղին զործածել այդպիսի յատկութիւնները: Նրա ամսագրին ամենայն իրաւամբ արժանի էր սկիտական անունը կրելու:

Ներկայ համարսում Փիլիպպովը զետեղել է իր ուշագրաւ աշխատութեան սկիզբը՝ «Փիլիսոփայական համակենք» խորագրով, որով հանրամատչելի ձեռվ վերլուծելու և քննելու էր փիլիսոփայութեան էսական հարցերը: Տպագրուածը միայն առաջին նամակն է, որ խօսում է «անհատական ստեղծագործութեան» մասին իրեն նախարան ամբողջ աշխատութեան: — «Իմ ներկայ համակի նպատակն է, ասում է բազմավաստ գիտնականը, տալ մի ներածութիւն գիտական այն սահմանների, որոնց մանրամասն տոպոգրաֆիական ուսումնաօբրութեամբ զբաղուելու եմ յետադաշտ նամակներով...»

Սակայն դաժան մարդ կտրեց նրա կեանքի թելը՝ որբացած թողնելով համակրելի ամսագիրը և ընթերցող հասարակութեանը զրկելով այդ ու այդ տեսակ ուրիշ շատ հետաքրքիր աշխատութիւններից:

«**Русское Богатство**.—«նից-շի և Դորկի».—Քննադատութիւնը արդէն մի քանի անգամ շշտել է այն փաստը, թէ Մակոմ Դորկիի գրուածքների մէջ բաւական խոչը տեղ են բանում նիցչեական գաղափարները, նիցչեական կուլտուրի և անհատական անսահման ազատութեան մասին, թէ Գորկին հետևող է նիցչեական փիլիսոփայութեան՝ առանց նախապէտանօթ լինելու դրա հիմունքների հետ Բայց այդ բորբը թուոցիկ բնաւորութիւն էր կրում, չը կար մի մանրակրկիտ ուսումնասիրութիւն, որ շօշափած հարցը լուսաբանէր իր ամբողջութեամբ: Անա այդ պակասը լլրացնել կարող է պ. Մ. Գելրոսի ներկայ յօդուածը՝ «նիցչէ և Գորկի» գիրնարկով:

Հեղինակը բաւական մտնբանան կերպով քննում է հարցը, համեմատական գիծ է անցկացնում այդ երկու հեղինակների մէջ, վերլուծում է նըլլանց գրուածքները, առաջ է բերում քաղուածքներ, բնորոշում է դրանց նըման և տարբեր կողմերը և զալիս է այն եղրակացութեան, որ Գորկիի «նիցչեականութիւնը» ունի իր ինքնատիպ յատկանիշները:

Դալով նրա մեծ ժողովրդականութեանը, պ. Գելրոս իրաւացի կերպով առում է, որ դրա գլխաւոր պատճառը ժամանակակից սոցիալական հոսանքներն են, որոնց արձագանք է տալիս Գորկին իր գրուածքներով: Իրուև ապացուց նա իշխում է այն ակներկ նմանութիւնը, որ կայ Գորկիի «Կայք և ձաւելք» հերթակի (1894 թ.) և Պետր Ռաբովի «Կրիտիկական զամբեկ» (1894 թ.) յայտնի աշխատութեան հիմնական գաղափարների մէջ, Գորկիի «Ոճնի օ սօկոլն»-ի (1896)

և Յուզակովի մի յօդուածի մէջ, որ տպագրուեց նոյն թականին՝ «Վոռոց քիլոսօֆին և ուսիզոլոգին» ամսագրում, Զտամէրի հեղինակութեան մասին:

Ինչպէս յայտնի է Գորկին շատ մեծ հեղինակութիւն ունի նաև արտասահմանում: Պ. Գելրոսի կարծիքով այդ երկութիւնը պատճառն այն է, որ Մակոմ Դորկին իր գրուածքների մէջ «աւելի բելեֆ», աւելի պարզ գոյներով է ծածանում այն գրօշակը, որին նույիրուած էր նիցչէի սահմանադրժական ամրող տաղանդը...»

«**ԱՐԱՐԱՏ**.—Յանիս. — Առաջիկայ սեպտեմբերի 28-ին—Վարագայ ս. Խաչի տօնի օրը Էջմիածնում տեղի է ունենալու ս. Մեռոնի օրհնութիւն, ուստի և Մայր Ծթոռի պաշտօնական թերթը նախօրօք հրաւէր է կարգում գրելով.

—«...Օր առաջ հրաւէր է կարգացւում այսու նաև ի սփիռս աշխարհ տարածեալ հայ ժողովրդին՝ պատրաստուել լուսոներամ բազմութեամբ զիմելու զէպի հանուլց չայաստանեացց հոգեոր ծննդեան մայր այդ ս. տաճարը—յշելով միանգամայն, որ 1600-րդ տարին բոլորում է այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցամբ հրաշտիբա տաճարի լուսեղին կամարները ձգուեցան, հովանի և անփոյթ նաւահանգիստ լինելու չայտթեան դպրերի յորդանքի դէմ»:

«**ԱՅԱՋՄԱՎԵՊ**.—Յուլիս. — Ներկայ համարում հայր երեմեան առաջնորդող յօդուածով ի միջի այլոց շօշափում է չայկական տառերի գիւտի առիթով «Պատմագիրք» հրատարակելու հարցը և զալիս է այն եղրակացութեան, որ ներկան կը պահանջէ քննական լուրջ չայց պատմութիւն մը. պ. Մալխասեանի ձեռնարկը պիտի ունենայ այդ լորդութիւնը. կարելի չէ՞ր որ պ. Մալխասեանի յարգ. յանձնաժողովը 20,000 ըստըլին և իր գովելի խանդավառ ճիզմն ու խնամքը յատկացնէր ազգային քննական պատմութեան. անով պաշ-

տելի Մաշտոցին յիշատակը աւելի յարդ ու փառք չե՞ր ստանար»...*);

Նոյն համարում տպուած է լէօի աշխատութիւնը՝ «Խուսահայ Վիպաղըրութիւն» խորագրով; Առայժմ տը պուած է աշխատութեան միայն մի մասը, որի մէջ քննութեան է առնուած ուստահայ վիպաղըրութեան առաջին շրջանը՝ Մկայլ նալբանդեանի «Մինին խօսք, միւսին հարս» վէսը, Սրակեանի, Պռոշեանի և Ըղայիանի վիպաղկան գրուածքները:

Նոյն հեղինակը վերջին «Գեղունի» ի մէջ ունի մի ուրիշ յօդուած՝ XIX-րդ դարի ոստահայոց բանաստեղծական գրականութեան մասին;

«ՀԱՆԴԻՍ ԱՄՄՈՒԵԱՅ. Եպւիս. — «Մուրճի № 5-ում մենք խօսել էինք արտասահմանեան հայ մամուլ մարին; — Այդ առիթով հետաքրքրական են նաև Վինենայի Մխիթարեանների օրգանի հետեւել խօսքերը.

«Հայ լրապարագ կեանքը՝ ծնունդն և մահը սունկի կեանքին նմանցուած է, և այս՝ շատ իրաւացի կերպով; Ամեն տարի, և կարելի է ըսկը՝ ամեն ամիս, շաբաթ և օր, նոր թերթերի մ' աշխարհ գալուն թմբուկը կը լսենք, և փոխադարձաբար նոյն շրջանով կիմանակը մահուան զանգակին զօլանջը կամ լրազական հրապարակէն անհետացումը; Կան թերթեր՝ որոնց կէս ճամբան շնչառապա իշնալը մեզի ցաւ կը պատճառէ, վասն զի հանրութիւնն անկէ բան մը կը շահէր, օգուտ մը կը տեսնէր; Կան թերթեր ալ՝ որոնց նշ թէ շգոյութիւնը այլ գոյութիւնը մեզի վեշտ կ'առթէ, վասն զի անսոնք հայ լրագրութեան կեղաերն են; Մեծ մեծու շացոցից իսոստումներով հրապարակ կ'իջնան և երկու երեք թերթ մամլոյ տակէն գուրս քաշելով՝ ցըսւելին ետքը՝ կամ բաժնեկանի գրապա-

նած՝ կծիկը կը դնեն և կամ ակնկալուած մամոնան չկարենալով շորթել ճարահասած յուսահասած կը լսեն: Առոնք հայ լրագրութիւն վարկը կոտըրելին՝ ընթերցող հասարակութեան հայ լրագրութիւն վրայ ունեցած համարումն և հաւաքը կորմացընել տալէն զամ' ուրիշ բանի շեն ծառայեր: — Եղիպատոսի հայ թերթերէն կը տեղեկանակը թէ հոն «Էրաբեր» անուն թերթ մըն ալ կը հրատարակուի. բայց մենք «Էրաբերին» միայն անունը լսեցինք, լորր տակաւին չէ: — Աղքասանդրոյ մէջ լոյս կը տեսնէ իւլ անուան հակասական «Փերակ» շարաթաթերթը: Փերթակէն մեղը կը սպասուի և նշ թէ դատարկութիւն... Կարծես թէ այս տարան—առաջին անգամ լոյս տեսած թերթերուն խմբագրիները խօսքերնին մէկ ըրած են իրենց լրագիւներուն բովանդակութեան հակասող անուն մը դնել: Ահա ապացոյց մ' ևս մեր բատծին: Ի շիկագոյ սկսած է հրատարակուի «Դասիարակ» անուամբ ամսարեր մը, որ կը բարկանայ ցորս փոքրագիր էջէ: Չորրորդ էջը ազգերուն կամ ծանուցումներուն յատկացուած է: Առաջին երեսին վրայ գրանուած առաջն յայտարարութիւնը՝ կրկնուած է երկրորդ երեսի մէջ: Միւս բաց մնացած աեղերը զոյտած են կցկոուր և անշահ տեղեկութիւններով: Աւելորդ և աննպաստակ է կարծենք այս թղուկ թերթին հսկայ սիսալերով ալ զբաղուի: Հետաքրքրութիւն համար միայն օրինակ մը յառաջ բերենք. Պղուսալքուս աշխարհածանօթ անունը գրուած է հոն «Փլու Թարքաս»: Chicago քաղաքին ծանօթ անունն անգամ անկարելի եղած է ուղիղ գըրելը, ուր լոյս կը տեսնէ այս գաճաճը: «Դարած փոխանակ «եկած» եւնի նըման հայ. կոշտ սիսալերուն վրայ խօսք շենք ուղեր լնել: Այսպիսինեւն ուրիշներուն դասիարակ ըլլալու մարմաշն գարակուելին յառաջ լաւույն շըր ըլլար որ նախ և առաջ իրենք զիրենք դասիարակէն...

* Մեր կարծիքը պ. Մալմասեանի ձեռնարկութեան մասին տես «Մուրճ» 1902 թ. № 11, եղեւ 223:

«ԳԵՂԱԽՆԻ», 1903 թ. երկրորդ տարի: —Այս պատկերազարդ «հայտթեղթը» գեղարքունուստական տեխնիկայի կողմից հրաշալի է. Ծուղթը, տպագրութիւնը, պատկերները գեղազանց են. սակայն անկեղծօրէն նոյն ածականը չենք կարող տալ նաև «Գեղունիս»-ի ներքին արժանաւորութիւններին. միքանի յօդուածների մէջ նկատելի է շատախօսութիւն ի վնաս բռվանդակութեան, իսկ պատկերների ընտրութեան մէջ չի երևում որոշ սիստեմ, հետեղականութիւն: Օվինակ, չը գիտենք ինչո՞ւ պ. պ. Ռարխոնեանի և ե. Լալյաբանի լուսանկարները այնքան յաճախ զարդարում են Վենետիկի Միխիթալեանների հրտապակստիւնները. «Բազմավէպի» ոչ միայն էջերն, այլ և շատիկը առաջներում զարդարում էին «Թատրոնի» և «Աղջագրական Հանդիսի» հրտապակփլշ-խմբագլիների պատկերներով... Այդ տեսակ վերաբերմունք դէպի ձեռքի տակ եղած կլիշէները միքի յլշնցնում է Դ. Նրծըունու մի ֆելիետոնը պատկերազարդ «Օրձագանքի» մասին... Անհասկանալի է նմանապէս, որ արտասահմանեան հայ գրական գործիչներից միայն պ. Բասմաջեանի պատկերն է զբուած, իսկ թիւրքահայրից միայն Արքիարեանինը և ձէվէլէկուր:

Գալով «Գեղունիս»-ի բարանդակու-

թեան, պէտք է նկատել, որ ամենամեծ տեղը բռնում են մեր դրականութեան նուիրուած ընդհանուր յօդուածներ. այդպէս են Սարիկեանի «Գրական դէմքեր», Ղաղիկեանի «Պատկեր Ղենհատիկեան Մլիթարեան հայկարանութեան», Երեմեանի «Հայ լրագրութեան ոգին և ուղղութիւնը», Լէօի «Թուսահայոց գըրականութիւնը»: Այս վերջինը հետաքրքրական է իրբու առաջին փորձ՝ ամփոփ մի աեսութիւն տալու մեր նորսագոյն գրականութեան մասին (բանասեղութիւն և թատերագրութիւն): Քրակուն-քննական այդ յօդուածներից դորս մնում է Վ. Փափաղեանի «Հաշիւ» պատմուածքը, և Սալպիտի «Կալուածտամտիրութիւնը և կալուածական հարկերը Սարպատականում» յօդուածը:

Ի վերջոյն ներուի մեզ նկատել, որ մի քիչ յարմար չէ թէ իր՝ «Գեղունիս»-ի մէջ և թէ «Բազմավէպ»-ում (№ 5, 6) գրուատել «Գեղունիս»-ն: Նմանապէս խորթ է տեսնել «Բազմավէպ»-ի շապկի վրայ 1903 թւականի «Գեղունիս»-ի բոլոր բաժանութերի անունները սպագրուած: Աւելի լաւ կը լինէր այդ դէպքում վիճակագրութիւն, քան չնշին մնափառութեան բաջալերութիւն... Առհասարակ պէտք է աշխատել «Գեղունիս»-ի ներքինը մօտեցնել նրա արտաքինի վեհութեան: